

Պ-412-05.12.2013,05.03.2014-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՈՎԱԶԳԻՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Արգելվում է՝

ա) զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներով ցուցադրել ծխախոտի գովազդ,

բ) զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներով ժամը 06:00-ից մինչև 22:30-ը ցուցադրել թունդ ակոհոլային խմիչքների (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային միավոր), բացառությամբ տեղական արտադրության կոնյակի, գովազդ»:

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.1 Արգելվում է՝

ծխախոտի գովազդ տեղադրել լրագրերի առաջին և վերջին էջերի կամ ամսագրերի առաջին, վերջին էջերի ու կազմի վրա: Արգելվում է ակոհոլային խմիչքների գովազդ տեղադրել լրագրերի կամ ամսագրերի առաջին էջի ու կազմի վրա:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, մասը, կետը	Առաջարկությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը կամ հիմնավորումը
Պատգամավոր Հ. Բաբուխանյան, պատգամավոր Հ.Մարգարյան	Հոդված 1	1-ին հոդվածը լրացնել հետևյալ՝ 2.1 կետով. «արգելվում է թունդ ակոհոլային խմիչքների այն գովազդը, որում չկա թունդ ակոհոլային խմիչքների վնասակարության մասին նախազգուշացնող տեղեկություն» բառերով:	Չի ընդունվել: Առաջարկությունը կրկնում է ոգելիչ խմիչքի գովազդի՝ գործող օրենքով արդեն իսկ նախատեսված սահմանափակումները և մասնավորեցումները:
Պատգամավոր Հ. Բաբուխանյան, պատգամավոր Հ.Մարգարյան	Հոդված 1	1-ին հոդվածում նոր խմբագրությամբ շարադրված հոդված 15-ի 5-րդ կետում «22:00-ը» բառերը փոխարինել «24:00-ը» բառերով:	Նման բովանդակությամբ առաջարկություն հնչեցվել է նաև առաջին ընթերցման քննարկումների ժամանակ ԱԺ նախագահ պրն. Հ. Աբրահամյանի կողմից: Առաջարկությունն ընդունվել է մասնակի: Օրենքի նախագծի երկրորդ ընթերցման տարբերակում «22:00-ը» բառերը փոխարինվել են «22:30-ը» բառերով: Գովազդային շուկայի ուսումնասիրությունը պարզել է, որ նման կերպ հնարավոր կլինի մի կողմից գովազդ ապահովել էլեկտրոնային լրատվության միջոցների համար, մյուս կողմից, հաշվի առնել առաջարկության հեղինակների հնչեցրած մտահոգությունը:

Պատգամավոր Հ. Բաբուխանյան, պատգամավոր Հ.Մարգարյան	Հոդված 1	1-ին հոդվածում ավելացնել «5.1 կետի «լրագրերի առաջին» բառերից հետո հետո հանել «և վերջին» բառերը»:	Առաջարկությունն ընդունվել է:
Պատգամավոր Հ. Բիշարյան, պատգամավոր Հ. Մարգարյան	Հոդված 1	1-ին հոդվածի «բ» ենթակետի «22:00-ը» բառերը փոխարինել «24:00-ը» բառերով:	Առաջարկությունն ընդունվել է մասնակի: Հիմնավորումը՝ վերևում: